Ներքին գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանը տւեց հետեւեալ բացատրութիւնները. «Նրանք, ովքեր ընդունում են Հայաստանը որպէս անկախ պետական միաւոր, այսպիսի հարցադնդում չպիտի անէին, քանի որ նորակազմ պետութիւնը ամենահասարակ վտանգներից իսկ կարող է տուժել, և կառավարութիւնը ամէն միջոց պիտի ձեռք առնի երկիրը զերծ պահելու որևէ պատահարից: Հայաստանում կան բաւական թւով բոլշևիկներ, որոնք՝ իրենց ասելով եկել են այստեղ միայն ապաստան գտնելու և ո՛չ մի գործունէութիւն չպիտի ունենան: Սակայն, դեռ յուլիս ամսին, Բէօյիւք-Վէդիի կռիւների ժամանակ, նրանք տպեցին մի թռուցիկ, որով կոչ էին անում գործին չդնալ երկաթուղագծի վրա և այլն: Հայաստանի անկախութեան տօնի օրը պատերին փակցւեցին թռուցիկներ, որոնք ուղղւած էին մեր պետական կազմի դէմ:

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օրէցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր գումարներ՝ ագիտացիայի համար: Միւս կողմից, անհերքելի փաստ է, որ ռուս մեծամասնականները դաշն են կապել երիտասարդ թիւրքերի հետ: Այդ համաձայնութեամբ տաճկական զօրքերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Դենիկինի թիկունքին խփելու համար: Ի՞նչ դրութեան մէջ կընկնի Հայաստանը այդ պարագային, պարզ է ամենքին, բայց մեծամասնականների համար դա արժէք չունի և, եթէ կուզէք, հայ ժողովրդի բնաջնջման գնով նրանք կիրագործեն իրենց ծրագիրը: Ադրբէջանում և Անդրկասպեան երկրում բոլշևիկեան չարժման դլուխ են անցել տաճիկ ջարդարարներ, որպիսիք են Նուրի փաչա, Քեազիմ բէյ և այլն: Վերոյիշեալ փաստերը կառավարութիւնը նկատել է որպէս յանցանք և միջոցներ է ձեռք առել նրանց դէմ, որոնք ակտիւ քայլեր են անում մեր պետութեան կամ կառավարութեան դէմ»:

Նախարարի բացատրութիւններից յետոյ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ: Սոց.-յեղափոխական Ա. Խոնդկարեանը՝ ընդարձակօրէն վեր առնելով հարցապնդման նիւթը՝ յայտնեց, որ ինքը հակառակ է բոլշևիզմին, բայց պնդում է, որ իւրաքանչիւր յանցանք պէտք է ձեւակերպւի և գործը յանձնւի դատարանին: Այս հողի վրա, ի հարկէ, հարցապնդման դէմ կարելի չէր առարկել, բայց հարցապնդման իսկական իմաստը այդ չէր:

Իր ճառի մէջ հետաքրքրական մերկացումներ արաւ Ա. Ջամալեանը: «Մեզի չարժման և բոլշևիկների դաշինքը, ասաց նա, զուտ բախտաբար, ճշմարտութիւն է. դրա հետևանքը այն է, որ մեր ժողովրդի գոյութիւնը թղթախաղի վրա է դրւում: Թիֆլիս եղած ժամանակս, բոլշևիկների Անդրկովկասեան Գերագոյն Գործադիր Մարմնի չրջանային կոմիտէի ականաւոր անդամներից մէկը յայտնեց ինձ, որ նոյեմբ. 27-ին Բաքւում, բոլշևիկների և երիտասարդ թիւրքերի միջև կայացել է մի համաձայնութիւն, որ տաճկական զօրքերը Հայաստանի վրայով պիտի անցնեն Դենիկինի թիկունքը բռնելու համար: Նոյն այդ անձնաւորութիւնը ասաց, որ իրենք միջոցներ պիտի ձեռք առնեն հայերի կոտորածի առաջն առնելու համար, բայց, ի հարկէ, կարող է իրենց այդ չյաջողւի. սրանք փաստեր են և ոչ ոք հերքել չի կարող:

Այժմ տեսնենք, ձերբակալւած բոլշևիկները կապ ունե՞ն այս ամենի հետ. կուսակցական կարգապահութեամբ ստորին մարմինը ենթարկւում է վերին մարմնի կարգադրութիւններին. բոլշևիկների Անդրկովկասեան Կոմի-